ՈՒՍՏԻԱՆ.– Չեմ իմանում ինչ ես ասում: Բա ասում էիր թալանը եկել է:

ՆԱՁԱՐ.– Ի՞նչ թալան,

ՈՒՍՏԻԱՆ.– Կրեմ գլուխդ, բա ո՞ւր էիր ասում:

ՆԱՁԱՐ.– էդ չէ. ասում են Քեռոզլու իգիթներ են եկել գեղը: Գնամ մի տեսնեմ էդ ո՞նց են սիրտ արել:

ՈՒՍՏԻԱՆ.– Ի՞նչ… էլի գնում ես գեղամիջում շնթռես: Ի՞նչ գործ ունիս գեղամիջում:

ՆԱՁԱՐ.– Իգիթ եմ, պիտի գեղամիջում երեւամ:

ՈՒՍՏԻԱՆ.– Դու մկան ծակը հազար թումանի ես առնում, ասում ես իգի՞թ եմ:

ՆԱՁԱՐ.– Կարգին խօսի,

ՈՒՍՏԻԱՆ.– (Մեծաբերան ու սպառնագին) Բո, ո՞նց չէ, «կարգին խօսի»: Գեղի իշխան ես: Գլո՛ւխդ թաղեմ: Էդ ո՞նց է, որ կարգին չեմ խօսում:

ՆԱՁԱՐ.– Չեմ հասկանում՝ դու ինձ ինչի տեղ ես դրել, որ ասում ես «իշխան եմ»: Ապա ի՞նչ եմ: Էդպէս մի խօսի, թէ չէ վեր կացա, հա՛ …

ՈՒՍՏԻԱՆ.– Բոյդ թաղեմ, դու ո՞վ ես, որ վրադ չխօսեմ: Մի թալան ես բերում տո՞ւն, թե՛ մի հունար ունիս: էդ էլ ինձ պահելու տե՞ղն է:

ՆԱՁԱՐ.– Ի՞նչ ես դուրս տալիս, ե՞ս պիտի քեզ պահեմ, թե՞ դու ինձ:

ՈՒՍՏԻԱՆ.– Ո՞նց թե: Ինչո՛ւ չես աշխատում:

ՆԱՁԱՐ.– (Սպառնանքով) Էդ ի՞նչ իմացա, էդ ի՞նչ համարձակութիւն էր…

ՈՒՍՏԻԱՆ.– (Ակամա (զարմացած) Ի՞նչ եղաւ:

ՆԱՁԱՐ.– էդ ո՞նց բերնից թռցրիր: Նազարն աշխատի: Գիտե՛ս, աշխարհք իմանա, ինչ կանի քեզ:

ՈՒՍՏԻԱՆ.– Բո՛ո՛ …թագաւոր ես գլխիս, որ չաշխատե՞ս:

ՆԱՁԱՐ.– Իմացի, որ ես չպիտի աշխատեմ, դո՛ւ պիտի աշխատես:

ՈՒՍՏԻԱՆ.– Ինչո՞ւ, հողեմ գլուխդ, դու ի՞նչ ես:

ՆԱՁԱՐ.– էնդուր որ ես ազնիւ եմ,

ՈՒՍՏԻԱՆ.– Ո՞նց թէ ազնիւ ես, էդ էլ նո՞ր հնարեցիր,

ՆԱՁԱՐ.– Ի՞նչ պիտի հնարեմ: Գրքերի մէջ գրած է: Պապիս ապուպապը թագաւոր էր: Մենք ցեղով ազնիւ ենք:

ՈՒՍՏԻԱՆ.– Ցխեմ պապիդ գլուխը: Ցեղով ազնիւը դու դառար, հա՞. Չես աշխատում հերիք չի՝ հիմի էլ իմ ազնուութունն ուզում ես ձեռիցս խլես: Ազնիւը դո՞ւ ես, թէ՞ ես:

ՆԱՁԱՐ.– Պո, դու է՞լ ազնիւ դուրս եկար: Դու ի՞նչ ազնիւ ես,

ՈՒՍՏԻԱՆ.– Ազնիւը ես եմ: Դու որ չես իմանում, աշխարհք չի՞ իմանում: